Արձանագրություն N 3

«ՉԱԻ-ԲԸԱՊՁԲ-16/3» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան,Կոմիտաս 49/4 «11» «11» 2016թ
ժ.14:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ա.Սեդրակյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Օհանյանը, Ս.Մարգարյանը

Հանձնաժողովի քարտուղար Հ.Ղազարյանը

1. Բաց ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ա.Սեդրակյան)

Ընդունել ի գիտություն, որ.

- Առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ «Փինք Ֆլամինգո Գ. և Ա. Կենտրոն» ՍՊԸ -ն, 02.11.2016թ. ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները), ինչպես նաև իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը ներկայացնելու մասին, որի կողմից համապատասխան փաստաթղթերը ներկայացվել են հրավերով սահմանված ժամկետներում:

- Հանձնաժողովի քարտուղարի կողմից 07.11.2016թ. առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները և գնահատման թերթիկների երկուական օրինակ տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:

- Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության ընթացում պարզվել է, որ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերում տրամաչափարկման աղբյուրները չեն համապատասխանում հրավերով նախատեսված չափանիշներին:

- Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» 10 փետրվարի 2011թ. N 168-Ն ՀՀ Կառավարության որոշման 51-րդ կետը՝ 09.11.2016թ.-ին «Փինք Ֆլամինգո Գ. և Ա. Կենտրոն» ՍՊԸ-ին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հայտնաբերված անհամապատասխանությունները՝ այդ մասին նույն օրը ծանուցումը ուղարկելով նրա էլ. փոստի հասցեին:

- «Փինք Ֆլամինգո Գ. և Ա. Կենտրոն» ՍՊԸ-ի կողմից արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետներում չեն շտկվել:

- «Փինք Ֆլամինգո Գ. և Ա. Կենտրոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի գնահատման արդյունքները բերված է ստորև ներկայացված աղյուսակում.

Մասնակցի հայտի գնահատման չափանիշները գնահատականը			*Մասնակցի հայտի գնահատման արդյունքները Մասնակցի անվանումը «Փինք Ֆլամինգո Գ. և Ա. Կենտրոն» ՍՊԸ
1	«Մասնակցության իրավունքը» չափանիշը	Բավարար Անբավարար	բավարար
2	«Մասնագիտական փորձառություն» չափանիշը	Բավարար Անբավարար	բավարար
3	«Ֆինանսական միջոցներ»չափանիշը	Բավարար Անբավարար	բավարար
4	Ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին	Բավարար Անբավարար	անբավարար
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ		Բավարար Անբավարար	անբավարար

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1.

- Հիմք ընդունելով գնահատման արդյունքները՝ հանձնաժողովը որոշեց մերժել «Փինք Ֆլամինգո Գ. և Ա. Կենտրոն» ՍՊԸ–ի կողմից ներկայացված հայտը, և ՀՀ Կառավարության 10 փետրվարի 2011թ. «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներին համաձայն՝ փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ «ՍԿ Դելտա Թրեյդ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա.Սեդրակյան)

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2.

Հանձնաժողովը որոշեց «ՉԱԻ-ԲԸԱՊՁԲ-16/3» ծածկագրով բաց ընթացակարգի փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրը ժամը 14:30-ին, ք. Երևան, Կոմիտաս 49/4 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Ա.Սեդրակյան
Անդամներ՝		Ա. Օհանյանը
		Ս.Մարգարյան
Քարտուղար՝		Հ.Ղազարյան